ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան
14 հուլիսի 2022թ. **ԲԴԽ-67-Ո-Կ-16**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝
Բարձրագույն դատական խորհրդի
նախագահի պաշտոնակատար *Ս. Չիչոյանի,*

մասնակցությամբ՝
անդամներ *Գ. Բեքմեզյանի,*
Դ. Խաչատուրյանի,
Մ. Մակյանի,
Ս. Միքայելյանի,
Ա. Մխիթարյանի,
Վ. Քոչարյանի,

2022 թվականի հուլիսի 14-ին գրավոր ընթացակարգով քննության առնելով Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանի բողոքը՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 16.06.2022 թվականին կայացված և 23.06.2022 թվականին հրապարակված (թիվ ԲԴԽ-58-Ո-Կ-11) որոշումը վերացնելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1.Գործի նախապատմությունը.

Բարձրագույն դատական խորհուրդը, 16.06.2022 թվականին քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի նախագահ (լիազորությունները կասեցված) Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն կազմող հանձնախմբի (այսուհետ նաև՝ Հանձնախումբ) 2022 թվականի մայիսի 18-ին Բարձրագույն դատական խորհրդին ներկայացված միջնորդությունը և կից ներկայացված փաստաթղթերը, 23.06.2022 թվականին հրապարակել է թիվ ԲԴԽ-58-Ո-Կ-11 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), ըստ որի՝ Հանձնախմբի միջնորդությունը բավարարվել է և Բարձրագույն դատական խորհրդի անդամ (նախագահ), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Վարդազարյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել են:

01.07.2022 թվականին Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանը (այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ կամ Բողոքաբեր) Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացրել բողոք (այսուհետ նաև՝ Բողոք), որով, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 156.1 հոդվածի 1-ին մասը, հայտնել է, որ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը կայացվել է 16.06.2022 թվականին, ինչից հետո ի հայտ են եկել հանգամանքներ, որոնք նախկինում Բողոքարկողը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և այդ հանգամանքները կարող էին ազդել Որոշման վրա:

2. Ռուբեն Վարդազարյանի Ներկայացուցչի դիրքորոշումը.

Ներկայացուցիչը, մասնավորապես, հայտնել է հետևյալը.

«Ի. Որոշումը դատարանի ոչ օրինական կազմով կայացված լինելու վերաբերյալ փաստարկներ:

Նշված հիմքի շրջանակներում կներկայացվեն հիմնավորումներ այն մասին, որ որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհուրդը գործը քննել է ***ոչ օրինական կազմով,*** *մասնավորապես այնպիսի անդամների (Գագիկ Ջհանգիրյան, Գրիգոր Բեքմեզյան և Դավիթ Խաչատուրյան) կողմից, ովքեր, Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էին ինքնաբացարկ հայտնել:*

1.1. Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ նախաձեռնած հանձնախմբի անդամներ Գրիգոր Բեքմեզյանի և Դավիթ Խաչատուրյանի կողմից ինքնաբացարկ հայտնելու՝ Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ փաստարկներ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ***Կոնվենցիա)*** *6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝*

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...)»:

Բարձրագույն դատական խորհրդի 27.11.2020թ. թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգի (այսուհետ՝ նաև Աշխատակարգ) 93-րդ կետի համաձայն՝

«Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է Օրենքով, իսկ այն դեպքում, երբ կոնկրետ դատավարական գործընթացը կարգավորված չէ Օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատավորի ինքնաբացարկի հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավորին կարող է բացարկ հայտնվել, կամ դատավորը սեփական նախաձեռնությամբ պարտավոր է ինքնաբացարկ հայտնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքերով»:

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ»:

Թիվ ՎԴ/9330/05/17 վարչական գործով 09.11.2021թ. հրապարակված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, մասնավորապես հետևյալը.

«ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր բազմաթիվ որոշումներում բացահայտել է դատարանի անկողմնակալության գնահատման չափանիշները:

Այսպես՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դատարանի անաչառությունը ենթադրում է գործը քննող դատարանի մոտ կանխակալ կարծիքի բացակայություն, իսկ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ չափանիշն է, որը վերաբերում է քննվող գործի կապակցությամբ տվյալ դատավորի անձնական համոզմունքներին և վարքագծին, իսկ երկրորդը օբյեկտիվ չափանիշը, վերաբերում է առաջարկվող այն երաշխիքներին, որոնք պետք է բավարար լինեն դատավորի անաչառության կապակցությամբ առաջացած ցանկացած ողջամիտ կասկած բացառելու համար (...):

Անկողմնակալության ապահովման մասով ազգային ընթացակարգերի, մասնավորապես՝ դատավորներին գործի քննությունից հեռացնելը կարգավորող կանոնների առկայությունն էական գործոն է: Այդպիսի կանոնները վկայում են այն մասին, որ ազգային օրենսդիրները հատուկ ուշադրություն են դարձնում տվյալ դատավորի կամ դատարանի անկողմնակալության հետ կապված հիմնավոր բոլոր կասկածները վերացնելուն և այդպիսի կասկածների պատճառները վերացնելու միջոցով փորձում են անկողմնակալություն ապահովել: Որպես այդպիսին կողմնակալության բացակայությունն ապահովելուց բացի՝ դրանք ուղղված են կողմնակալության ցանկացած արտաքին հատկանիշ վերացնելուն և այդպիսով նպաստում են, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն: Իրավիճակից կամ կապից է կախված

դատավորի անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը: Այդ կասկածների օբյեկտիվորեն հիմնավորված լինելը կամ չլինելն առավելապես կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և այն գործոններից, որոնք այդ իմաստով պետք է հաշվի առնվեն (...)»:

Տվյալ դեպքում որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհրդի կազմում ընդգրկված Գրիգոր Բեքմեզյանը կանխակալ վերաբերմունք ունի կարգապահական վարույթի կողմ Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, որպիսի հանգամանքը հաստատվում է կարգապահական վարույթի ընթացքում նրա դրսևորած վարքագծով: Մասնավորապես 16.06.2022թ., ժամը 15:00-ին նշանակված նիստում, պատասխանելով ԲԴԽ անդամ Անի Մխիթարյանի այն հարցին, թե պարոն Մելիքջանյանն իրեն անկողմնակալ համարում է սույն գործով, պարոն Բեքմեզյանը նշել է հետևյալը.

«Այո: Հանձնախումբն առավել, քան օբյեկտիվ է և Հանձնախմբի կողմից կազմված միջնորդությունը հենց նաև խոսում է նրա մասին, որ կանխակալ վերաբերմունք չկա: Այսինքն՝ Հանձնախումբը չի ասում վերջնական արդյո՞ք կա խախտում, թե՝ չէ: Հանձնախումբը, տեսնելով առերևույթ խախտման հիմքերը, դրանք բարձրացնում է և ներկայացնում է Բարձրագույն դատական խորհրդի ուշադրությանը: Ասեմ՝ ինչու: Նախևառաջ, մենք բոլորս պետք է հասկանանք, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամները, իրենք պատասխանատվության ենթարկելով դատավորներին, կարգապահական այսպես ասած վերահսկողություն իրականացնելով դատավորների գործողությունների նկատմամբ, մենք պետք է ավելի բարձր չափանիշներ սահմանենք մեր նկատմամբ: ***Եվ ցանկացած դեպքում, եթե Բարձրագույն դատական խորհրդի անդամը կատարում է որևէ գործողություն, որի նկատմամբ կարող են գործընթաց սկսել միմիայն Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Բարձրագույն դատական խորհրդի անդամները պարտավոր են դրան արձագանքել»:***

Նշված նիստից հետո՝ 20.06.2022թ. Ռուբեն Վարդազարյանն իր ներկայացուցչի՝ Արամ Օրբելյանի հետ համատեղ հրավիրել է ասուլիս, որի ընթացքում Ռուբեն Վարդազարյանը հրապարակել է իր, Գագիկ Ջհանգիրյանի և Ստեփան Միքայելյանի մասնակցությամբ տեղի ունեցած խոսակցության հատվածների ձայնագրությունը, որում պարունակվող տեղեկությունները վկայում են Գագիկ Ջհանգիրյանի կողմից դատավորի վարքագծի կանոնների առերևույթ խախտումներ թույլ տրված լինելու մասին: Միաժամանակ նշված մամլո ասուլիսի ընթացքում Ռուբեն Վարդազարյանը կոչ է արել ԲԴԽ անդամներ Գրիգոր Բեքմեզյանին, Լիպարիտ Մելիքջանյանին և Դավիթ Խաչատուրյանին Գագիկ Ջհանգիրյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել ԲԴԽ: Գրիգոր Բեքմեզյանը,

արձագանքելով ձայնագրությանը, «news.am» լրատվական կայքին 21.06.2022թ. տրված հարցազրույցում[1] հայտնել է մասնավորապես հետևյալը՝

«Քանի որ ձայնագրության մեջ ԲԴԽ նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Ջհանգիրյանի և ԲԴԽ նախագահ (լիազորությունները ժամանակավորապես կասեցված են) Ռուբեն Վարդազարյանի խոսակցության ձայնագրությունը մոնտաժված էր, ինչի մասին ասել է նաև Վարդազարյանը, ես իմ անունից նրան գրություն եմ ուղարկել, խնդրել եմ՝ տրամադրել ձայնագրության ամբողջական տարբերակը:

(...)

Ձայնագրության վերաբերյալ ***մենք քննարկում ենք ունեցել Ջհանգիրյանի հետ: Ջհանգիրյանը մեզ տվել է որոշակի պարզաբանումներ, բայց չեմ կարող նշել ինչ պարզաբանումներ, որովհետև հանդիպումը եղել է փակ:***

Որոշվել է, որ Վարդազարյանի վերաբերյալ որոշումը հրապարակելուց հետո ինքը կտա նաև հարցազրույց և կպարզաբանի այդ թեման: ***Երբ լսեցի պարոն Ջհանգիրյանի կողմից արված պարզաբանումները, իմ մոտ շատ հարցեր փարատվեցին****, բայց նման եզրակացություն հայտնելու համար ես պետք է ամբողջական ձայնագրությունը լսեմ»:*

Վերևում շարադրված փաստական հանգամանքների համադրությունից ակնհայտ է, որ Գրիգոր Բեքմեզյանի կողմից դրսևորվել է ***ակնհայտ տարբերակված մոտեցում ԲԴԽ երկու անդամների նկատմամբ՝*** *ի վնաս Ռուբեն Վարդազարյանի: Մասնավորապես, Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ հանդես գալուց առաջ Գրիգոր Բեքմեզյանը հարկ չի համարել որևէ բացատրություն պահանջել Ռուբեն Վարդազարյանից, այլ* ***«տեսնելով առերևույթ խախտման հիմքերը» իր պարտքն է համարել բարձրաձայնել այդ հիմքերը Բարձրագույն դատական խորհրդի առջև,*** *այնինչ Գագիկ Ջհանգիրյանի դեպքում պարզաբանում է պահանջել վերջինիցս և դա համարելով բավարար՝ ձեռնպահ է մնացել նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ հանդես գալուց: Ընդ որում, Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննարկելու համար նշանակված նիստի ժամանակ պատասխանելով ԲԴԽ անդամ Անի Մխիթարյանի այն հարցին, թե արդյոք պարոն Բեքմեզյանը կողմին հարց տալու անհրաժեշտություն ունի, վերջինս նշել է, որ* ***«կողմին հարց տալու անհրաժեշտություն այս պահին ես չունեմ»:***

[1] https://news.am/arm/news/708381.html

Բացի այդ, Գրիգոր Բեքմեզյանին չի անհանգստացրել այն հանգամանքը, որ 10.05.2022թ. «ArmDaily»[2] էլեկտրոնային պարբերականում նշված հոդվածը հնարավոր է, որ ամբողջական չէ կամ հնարավոր է, որ խեղաթյուրված կամ կոնտեքստից կտրված է (նշվածն ակնհայտ է նիստի ընթացքում Սերգեյ Չիչոյանի համապատասխան հարցին Գրիգոր Բեքմեզյանի տված պատասխանից), ավելին, վերջինս հարկ չի համարել նաև այդ հարցը պարզաբանելու համար լսել Ռուբեն Վարդազարյանի կարծիքը, մինչդեռ Գագիկ Ջհանգիրյանի դեպքում վերջինս համարել է, որ ձայնագրության «մոնտաժված տարբերակով եզրակացություն անելը պրոֆեսիոնալ չէ» և ձայնագրության ամբողջական տարբերակը պահանջող գրություն է ուղարկել Ռուբեն Վարդազարյանին:

Շարադրվածն ակնհայտ է դարձնում, որ Գրիգոր Բեքմեզյանը կանխակալ վերաբերմունք է ունեցել (ունի) կարգապահական վարույթում որպես կողմ հանդես եկած (եկող) Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, ինչն Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմք է դատավորի ինքնաբացարկի համար, մինչդեռ Գրիգոր Բեքմեզյանը ձեռնպահ է մնացել ինքնաբացարկ հայտնելուց: ***Արդյունքում դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, մասնավորապես այնպիսի դատավորի կողմից, ով, Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:***

Հարկ ենք համարում նշել նաև, որ «news.am» պարբերականին Գրիգոր Բեքմեզյանը հարցազրույց է տվել 21.06.2022թ., այսինքն՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունից և դրա վերաբերյալ որոշման կայացումից հետո (23.06.2022թ. որոշումը հրապարակելիս Գագիկ Ջհանգիրյանը հայտնել է, որ այն կայացվել է 16.06.2022թ.), ինչի արդյունքում Ռուբեն Վարդազարյանը զրկվել է հարցազրույցի բովանդակությունից բխող՝ Գրիգոր Բեքմեզյանի՝ սույն գործով անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքը Բարձրագույն դատական խորհրդին գործի քննության ընթացքում հայտնելու հնարավորությունից, իսկ այդ հանգամանքը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունի նաև ԲԴԽ անդամ ***Դավիթ Խաչատուրյանը****, ինչն ակնհայտ է դառնում 27.06.2022թ. Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպազրույցում նրա հայտնած տեղեկությունների բովանդակությունից: Մասնավորապես ճեպազրույցի ընթացքում վերջինս հայտնել է, որ ԲԴԽ-ում Գագիկ Ջհանգիրյանի մասնակցությամբ ձայնագրության հարցով հանձնախումբ է ձևավորվել, ինչի կապակցությամբ խնդրել են* ***«ձայնագրության ամբողջական, մոնտաժով չաղավաղված տարբերակը»:***

[2] https://armdaily.am/?p=178158&l=am

Ինչպես Գրիգոր Բեքմեզյանի դեպքում էր, Դավիթ Խաչատուրյանի դեպքում ևս ակնհայտ է նրա կողմից ԲԴԽ երկու անդամների նկատմամբ տարբերակված մոտեցում դրսևորված լինելու հանգամանքը՝ ի վնաս Ռուբեն Վարդազարյանի: Մասնավորապես, թե՛ Ռուբեն Վարդազարյանի, և թե՛ Գագիկ Ջհանգիրյանի դեմ կարգապահական վարույթ հարուցելու հանձնախմբի կազմում ընդգրկված Դավիթ Խաչատուրյանը Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ հանդես գալուց առաջ հարկ չի համարել դիմել «ArmDaily» պարբերականին պարզելու համար, թե արդյոք Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացած հոդվածը ամբողջական է, թե՝ ոչ, կամ արդյոք այն խեղաթյուրված կամ կոնտեքստից կտրված չէ, այնինչ Գագիկ Ջհանգիրյանի դեպքում պահանջել է ***«ձայնագրության ամբողջական, մոնտաժով չաղավաղված տարբերակը»:***

Շարադրվածն ակնհայտ է դարձնում, որ Դավիթ Խաչատուրյանը ևս կանխակալ վերաբերմունք է ունեցել (ունի) կարգապահական վարույթում որպես կողմ հանդես եկած (եկող) Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, ինչն Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմք է դատավորի ինքնաբացարկի համար, մինչդեռ Դավիթ Խաչատուրյանը ձեռնպահ է մնացել ինքնաբացարկ հայտնելուց: ***Արդյունքում դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, մասնավորապես այնպիսի դատավորի կողմից, ով, Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:***

Հարկ ենք համարում նշել նաև, որ Ազգային ժողովում Դավիթ Խաչատուրյանի ճեպազրույցը տեղի է ունեցել 27.06.2022թ., այսինքն՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունից և դրա վերաբերյալ որոշման կայացումից հետո (23.06.2022թ. որոշումը հրապարակելիս Գագիկ Ջհանգիրյանը հայտնել է, որ այն կայացվել է 16.06.2022թ.), ինչի արդյունքում Ռուբեն Վարդազարյանը զրկվել է ճեպազրույցի բովանդակությունից բխող՝ Դավիթ Խաչատուրյանի՝ սույն գործով անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքը Բարձրագույն դատական խորհրդին գործի քննության ընթացքում հայտնելու հնարավորությունից, իսկ այդ հանգամանքը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

1.2 Գագիկ Ջհանգիրյանի կողմից ինքնաբացարկ հայտնելու՝ Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ փաստարկներ:

Տվյալ դեպքում Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում նշանակված նիստերը նախագահել է

Գագիկ Ջհանգիրյանը, ով ակնհայտորեն կանխակալ վերաբերմունք ունի կարգապահական վարույթում որպես կողմ հանդես եկող Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ: Մասնավորապես, ինչպես վերն արդեն նշվեց 20.06.2022թ. Ռուբեն Վարդազարյանն իր ներկայացուցչի՝ Արամ Օրբելյանի հետ համատեղ հրավիրել է ասուլիս, որի ընթացքում Ռուբեն Վարդազարյանը հրապարակել է իր, Գագիկ Ջհանգիրյանի և Ստեփան Միքայելյանի մասնակցությամբ տեղի ունեցած խոսակցության ձայնագրությունը, որում պարունակվող տեղեկությունները վկայում են Գագիկ Ջհանգիրյանի կողմից դատավորի վարքագծի կանոնների առերևույթ խախտումներ թույլ տրված լինելու մասին: Միաժամանակ նշված մամլո ասուլիսի ընթացքում Ռուբեն Վարդազարյանը կոչ է արել ԲԴԽ անդամներ Գրիգոր Բեքմեզյանին, Լիպարիտ Մելիքջանյանին և Դավիթ Խաչատուրյանին Գագիկ Ջհանգիրյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել ԲԴԽ:

Գագիկ Ջհանգիրյանը 23.06.2022թ. Պետրոս Ղազարյանին տրված հարցազրույցի[3] ընթացքում մեկնաբանել է նշված ձայնագրությունը՝ հաղորդման ընթացքում հայտնելով մասնավորապես հետևյալը.

«(…) _Արդյոք այն ձայնագրությունը, որ հնչեցրիք, արդյո՞ք դա չի սրվերում հենց այդ բարեփոխումները (Պետրոս Ղազարյան):

Իմ կարծիքով չի սրվերում, որովհետև ***իմ առաջ խնդիր է դրված, ես այդ խնդիրը դրել էի, որպեսզի պարոն Վարդազարյանը կամավոր, իր դիմումի համաձայն լքի նախագահի աթոռը և խորհուրդը ընտրի մեկ այլ նախագահ, որովհետև պարոն Վարդազարյանը արդեն դատական համակարգը մտցրել էր բացահայտ հակադրման մեջ գործադիր և օրենսդիր իշխանության հետ*** *(Գագիկ Ջհանգիրյան):*

(…)

_Դուք ասում եք այսպիսի արտահայտություն, որ «վզիս դրած է» հա՞ որ դա առաջին եզրակացությունը որն ա, որ ինչ-որ այլ իշխանության ճյուղից ձեզ հանձնարարել են անել ինչ-ինչ-ինչ բաներ, այն ինչի դեմ դուք ասում եք, որ դուք եկել եք պայքարելու, դուրս ա գալիս, որ գործադիրը ձեզ թելադրում ա ինչ անել (Պետրոս Ղազարյան):

_Դա մտերմիկ զրույց ա, և ես ասեցի, որ էդ դատաիրավական բարեփոխումների խնդիրը իմ առաքելությունն ա եղել իմ ամբողջ մասնագիտական աշխատանքի ընթացքում: Եվ վզիս դրածը, կոպիտ ասած, իմ ճիտին պարտքն ա, (…) այսինքն՝ ես ստանձնել եմ կամավոր էդ բարեփոխման ընթացքի կատարումը, տեսական հիմքերի շարադրումը և դա ստանձնել եմ 90 թվից, ոչ թե 2020 թվականին եմ առաջին անգամ

[3] https://www.youtube.com/watch?v=KBnPsA5PXqM

ձեռնամուխ եղել: Երբ որ ես ասում եմ՝ «իմ վզին դրած ա», դա ես նկատի ունեմ, որ դա իմ առաքելությունն ա, իմ կոչումն ա, և ոչ թե ինչ-որ մեկը ինձ պարտադրել ա» (Գագիկ Ջհանգիրյան):

(...)

_Ավելի շատ շանտաժ չի՞ հիշեցնում պարոն Ջհանգիրյան, որ դուք եկել եք և ասում եք այ կհեռանաս, թե չէ գործեր կան և ես գառանտ չեմ լինի և այդ գործով դու, ըստ էության, կդատվես, եթե չհեռանաս: Դա ուղղակի ԲԴԽ նախագահի նկատմամբ շանտաժ և ճնշում չի (Պետրոս Ղազարյան):

_Գիտե՞ք ես էլի եմ ասում, ես գնացել եմ բանակցելու, որպեսզի կարողանամ պարոն Վարդազարյանին համոզեմ, ***որովհետև շատ բարդ սխեմա է ԲԴԽ նախագահին հրաժարականի պարտադրելը,*** *էն ժամանակ ես ընդամենը քսան օրվա ԲԴԽ անդամ եմ եղել, հասկանում եք, ես նույնիսկ էդ ԲԴԽ անդամներին բոլորին չեմ էլ ճանաչել, չեմ էլ շփվել,* ***առնվազն երեքը պտի նախաձեռներ, մեծամասնությունով պետք է նրա լիազորությունները դադարեցվեր, իսկ էդ նոյեմբերյան էդ հայտնի հայտարարությունը շատ լավ առիթ էր եղել, բայց էդ ժամկետը բաց էին թողել,*** *հասկանում եք, խորհուրդը ինքը պտի աներ՝ չէր արել» (Գագիկ Ջհանգիրյան):*

Դատավորի անկախությունը սոսկ արտաքին ուղղվածության վերացական պահանջ չէ. այն կարող է երաշխավորված լինել միայն այն դեպքում, երբ դատավորը ևս օժտված է անկողմնակալ և անաչառ լինելու ունակությամբ, մինչդեռ ինչպես ակնհայտ է Գագիկ Ջհանգիրյանի կողմից Պետրոս Ղազարյանին տված հարցազրույցի բովանդակությունից, վերջինս անաչառ և անկողմնակալ չէ սույն գործով, նրա միակ նպատակը Ռուբեն Վարդազարյանին ԲԴԽ նախագահի պաշտոնից ամեն գնով հեռացնելն է, որպիսի «առաքելությունը» ինքն իր «ճիտին պարտքն է» համարում: Ամբողջ հարցազրույցի ընթացքում Գագիկ Ջհանգիրյանի արտահայտած մտքերն ակնհայտ են դարձնում, որ ինքն առիթ է փնտրել Ռուբեն Վարդազարյանին ԲԴԽ նախագահի պաշտոնից հեռացնելու համար և հաշվի առնելով, որ «նոյեմբերյան հայտնի արտահայտությունից հետո» կարգապահական վարույթ հարուցելու ժամկետը ԲԴԽ կողմից բաց է թողնվել, հաջորդ հարմար առիթը «ArmDaily» պարբերականին Ռուբեն Վարդազարյանի հարցազրույցն է եղել: Ընդ որում, Գագիկ Ջհանգիրյանի հարցազրույցի ուսումնասիրությունը և կարգապահական վարույթի ընթացքում Ռուբեն Վարդազարյանի արդար դատաքննության իրավունքի բազմակի և կոպիտ խախտումները վկայում են այն մասին, որ տվյալ դեպքում ոչ թե իրականացվել է Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի ըստ էության քննություն, այլ կերպ ասած՝ նրա կողմից խախտում թույլ տրված լինելու կամ չլինելու հարցի պարզում, այլ ԲԴԽ-ն (առնվազն բավարար թվով անդամները), կամ առնվազն հենց Գագիկ Ջհանգիրյանն արդեն ունեցել է հստակ դիրքորոշում, որը հանգել է Ռուբեն Վարդազարյանի՝ որպես ԲԴԽ նախագահի

լիազորությունների դադարեցմանը, իսկ կարգապահական վարույթը կրել է սոսկ ձևական բնույթ:

Շարադրվածն ակնհայտ է դարձնում, որ Գագիկ Ջհանգիրյանը կանխակալ վերաբերմունք է ունեցել (ունի) կարգապահական վարույթում որպես կողմ հանդես եկած (եկող) Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, ինչն Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմք է դատավորի ինքնաբացարկի համար, մինչդեռ Գագիկ Ջհանգիրյանը ձեռնպահ է մնացել ինքնաբացարկ հայտնելուց: ***Արդյունքում դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, մասնավորապես այնպիսի դատավորի կողմից, ով, Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:***

Հարկ ենք համարում նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք հեռուստածրագրի եթերում Պետրոս Ղազարյանին Գագիկ Ջհանգիրյանը հարցազրույց է տվել 23.06.2022թ., այսինքն՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունից և դրա վերաբերյալ որոշման կայացումից հետո, ինչի արդյունքում Ռուբեն Վարդազարյանը զրկվել է այդ հարցազրույցի բովանդակությունից բխող՝ Գագիկ Ջհանգիրյանի՝ սույն գործով անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքը Բարձրագույն դատական խորհրդին գործի քննության ընթացքում հայտնելու հնարավորությունից, իսկ այդ հանգամանքը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա: Ավելին՝ առկա ձայնագրությունը հնարավոր չի եղել ներկայացնել դատական նիստին՝ կրկին կողմից անկախ պատճառով, քանի որ դատական նիստը պետք է հետաձգվեր ստորև, ներկայացված հիմքերով, ինչի դեպքում հնարավոր կլիներ հաջորդ դատական նիստի ժամանակ միջնորդել անցնել դռնփակ ռեժիմի և նոր հրապարակել ձայնագրությունը:

II. Ռուբեն Վարդազարյանի արդար դատաքննության իրավունքի խախտումներ թույլ տրված լինելու վերաբերյալ փաստարկներ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...)»:

Աշխատակարգի 93-րդ կետի համաձայն՝

«Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է Օրենքով, իսկ այն դեպքում, երբ կոնկրետ դատավարական գործընթացը կարգավորված չէ Օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«Ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները, վկաները, փորձագետները և թարգմանիչները»:

Նույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Կողմն իրավունք ունի դատարանում դատավարական գործողություններ ***կատարելու անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով»:***

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն.

«արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները[4]».

«Դատարանի իրավունքը» և մատչելիության իրավունքը բացարձակ չեն: Դրանք կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն ***դրանով չպետք է սահմանափակվի կամ նվազեցվի անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը[5]***

«....իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև պրակտիկայում»[6].

«....պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ

---

[4] տե՛ս Beles-ը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, application no. 47273/99, Եվրոպական դատարանի 12.02.2003թ. ի որոշում, § 49

[5] տե՛ս, Philis-ն ընդդեմ Հունաստանի, application no. 12750/87; 13780/88; 14003/88, Եվրոպական դատարանի 27.08.1991 թվականի որոշում, § 59, De Geouffre de la Pradelle-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 12964/87, Եվրոպական դատարանի 16.12.1992 թվականի որոշում, § 28, Stanev-ն ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ], application no. 36760/06, Եվրոպական դատարանի 17.01.2012 թվականի որոշում, § 229

[6] տե՛ս, KUDLA KUDLA v. POLAND, app. no. 30210/96, Եվրոպական դատարանի 26.10.2000 թվականի որոշում, § 157-158

գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը»[7]:

Թիվ ԱՎԴ2/0158/02/18 քաղաքացիական գործով 04.06.2021թ. հրապարակած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել հետևյալ հարցադրման կապակցությամբ.

«այն դեպքում, երբ դատարանը գործի քննությունն անցկացրել է միայն մեկ դատական նիստով՝ առանց գործը դատաքննության նախապատրաստելու, արդյո՞ք իրավաչափ է վերաքննիչ բողոքին կից ներկայացված՝ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը հաստատող նոր ապացույցը Վերաքննիչ դատարանի կողմից չընդունելը միայն այն պատճառաբանությամբ, որ կողմը, պատշաճ ծանուցված լինելով, այդ ապացույցը չի ներկայացրել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ, եթե բողոք բերած անձը հիմնավորում է, որ դատական նիստին չի ներկայացել իր կամքից անկախ հանգամանքներով՝ հիվանդության պատճառով»:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը.

*«Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ այն դեպքերում, երբ **վերաքննիչ բողոքում ներկայացվել են այնպիսի փաստարկներ** և դրանք հիմնավորող ապացույցներ, որոնք չեն ներկայացվել ու քննության առարկա չեն դարձվել առաջին ատյանի դատարանում, սակայն վերաքննիչ բողոքում պատճառաբանվել է դրանք հայտնելու և ներկայացնելու անհնարինությունը, ապա վերաքննիչ դատարանը պարտավոր է դրանք քննության առնել ու դրանց վերաբերյալ հայտնել իր դիրքորոշումը: Ընդ որում, բողոք բերած անձի կամքից անկախ ապացույցը չներկայացնելը կամ վերաքննիչ բողոքում նոր փաստարկներ հայտնելը կարող են պայմանավորված լինել ոչ միայն այնպիսի **օբյեկտիվ հանգամանքներով,** որոնց վրա հասնելու արդյունքում վերջինս չի կարողացել ձեռք բերել ապացույցը կամ **հայտնել իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում,** այնպես էլ կարող են լինել **դատարանի այնպիսի գործողությունների հետևանք,** որոնց արդյունքում բողոք բերած անձը բավարար հնարավորություն չի ունեցել դատարան ներկայացնելու այդ ապացույցը **կամ հայտնելու իր դիրքորոշումը»:***

Տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրա-կանացրել է ընդամենը մեկ դատական նիստով: Նախքան դատական նիստը Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչը Բարձրագույն դատական խորհրդին հայտնել է տվյալ դատական նիստին իր ներկայանալու անհնարինության մասին՝ կցելով այդ

---

[7] տե՛ս, օրինակ, «Հայկապ» բանկ ՓԲԸ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարն ընդդեմ Շահեն Բաբայանի թիվ 2-2128 (Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի, Շենգավիթի թաղապետարանն ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոների և մյուսների թիվ 3-2236(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումները

փաստը հաստատող համապատասխան ապացույցներ և խնդրելով գործի քննությունը հետաձգել, մինչդեռ Բարձրագույն դատական խորհուրդը ոչ միայն չի հետաձգել գործի քննությունը, այլև չի անդրադարձել պատասխան ներկայացնելու ժամկետը մեկշաբաթյա ժամկետով երկարաձգելու վերաբերյալ Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի միջնորդությանը: Թեև Բարձրագույն դատական խորհուրդն ուղղակիորեն չի նշել, այդուհանդերձ 16.06.2022թ. կայացած դատական նիստի տեսաձայնագրության ուսումնասիրությունից ակնհայտ է, որ գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է ոչ թե այն պատճառով, որ անհարգելի է համարվել ներկայացուցչի բացակայությունը, այլ որովհետև միջնորդությունը տեղեկություններ չի պարունակել Ռուբեն Վարդազարյանի՝ տվյալ դատական նիստին ներկայանալու անհնարինության մասին: Մինչդեռ Ռուբեն Վարդազարյանը տվյալ նիստին չի ներկայացել իր կամքից անկախ հանգամանքներում՝ վատառողջ լինելու պատճառով, ինչը հաստատվում է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ տնօրեն Թ. Ստեփանյանի կողմից 17.06.2022թ. տրված թիվ 516 գրությամբ: Արդյունքում խախտվել է Ռուբեն Վարդազարյանի՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված լսված լինելու իրավունքը:

Ակնհայտ է, որ Ռուբեն Վարդազարյանը կարգապահական վարույթի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից զրկվել է որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհրդի գործողությունների հետևանքով, ուստի Օրենքի 156.1 կետի ուժով Բարձրագույն դատական խորհրդի կողմից 23.06.2022թ. հրապարակված Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը ենթակա է վերացման:

Միաժամանակ հաշվի առնելով այն, որ Բարձրագույն դատական խորհուրդը մինչ օրս չի հայտնել պատասխան ներկայացնելու Օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետը ևս մեկշաբաթյա ժամկետով երկարաձգելու վերաբերյալ Ռուբեն Վարդազարյանի միջնորդության վերաբերյալ իր որոշումը[8], ինչպես նաև այն, որ իր կամքից անկախ հանգամանքներում Ռուբեն Վարդազարյանը զրկվել է իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ բովանդակային դիրքորոշում հայտնելու հնարավորությունից, սույն բողոքին կցում ենք նշված հարցի վերաբերյալ Ռուբեն Վարդազարյանի պատասխանը:

---

[8] 14.06.2022թ. Ռուբեն Վարդազարյանի կողմից ներկայացված է եղել երեք միջնորդություն՝ գործի քննությունը հետաձգելու, կարգապահական վարույթը կարճելու, հակառակ դեպքում՝ պատասխան ներկայացնելու երկշաբաթյա ժամկետը ևս մեկշաբաթյա ժամկետով երկարաձգելու մասին: Առաջին երկու որոշումների վերաբերյալ կայացվել են արձանագրային որոշումներ, սակայն երրորդ միջնորդության մասով մինչ օրս որոշում չի կայացվել: 20.06.2022թ. Ռուբեն Վարդազարյանի անունից ներկայացվել է նաև դիմում՝ նշված միջնորդության վերաբերյալ ԲԴԽ որոշումը ստանալու համար, ինչին ի պատասխան Գագիկ Ջհանգիրյանը 23.06.2022թ. թիվ ԴԴ-1 Ե-5182 գրությամբ հայտնել է, որ այդ որոշումը տրամադրել հնարավոր չէ, քանի որ առանձին դատական ակտի տեսքով չի կայացվել:

Թեև Բարձրագույն դատական խորհրդի կողմից 16.06.2022թ. կայացված և 23.06.2022թ. հրապարակված որոշումը դեռևս Ռուբեն Վարդազարյանին (նրա ներկայացուցչին) չի փրամադրվել, այդուհանդերձ հաշվի առնելով, որ փվյալ դեպքում բողոքը ներկայացվում է Օրենքի 156.1 կետով սահմանված հիմքով՝ ի հայտ եկած այնպիսի էական հանգամանքի ուժով, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող է ազդել որոշման վրա, այսինքն սույն բողոքը չի հանդիսանում ակտի դասական բողոքարկում՝ դրանում առկա թերությունները վերացնելու համար, կարծում ենք, որ որոշումը Ռուբեն Վարդազարյանին փրամադրված չլինելը խոչընդոտ չէ սույն բողոքը վարույթ ընդունելու և քննելու համար»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանը խնդրել է Բողոքն ընդունել վարույթ և Բողոքի քննության արդյունքում վերացնել Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 16.06.2022թ. կայացված և 23.06.2022թ. հրապարակված որոշումը:

Ներկայացուցչի կողմից Բողոքին կից ներկայացվել են թվով 4 միջնորդություններ, այն է՝ 1) բողոքի քննությունը Ռուբեն Վարդազարյանի մասնակցությամբ մինչև 27.07.2022 թվականը. իրականացնելու մասին, 2) Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանին բացարկ հայտնելու մասին, 3) Բարձրագույն դատական խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանին բացարկ հայտնելու մասին, 4) Բարձրագույն դատական խորհրդի անդամ Դավիթ Խաչատուրյանին բացարկ հայտնելու մասին:

<u>3.Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.</u>

1. Բարձրագույն դատական խորհուրդը Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պաասխանատվության ենթարկելու հարցը խորհրդակցական սենյակում քննարկել և որոշում է կայացրել 16.06.2022 թվականին, Որոշումը հրապարակվել է 23.06.2022 թվականին:

2. Ռուբեն Վարդազարյանի կողմից իր և խորհրդի անդամներ Գագիկ Ջհանգիրյանի ու Ստեփան Միքայելյանի մասնակցությամբ հանդիպման ձայնագրության մոնտաժված տարբերակը հրապարակվել է 20.06.2022 թվականի մամուլի ասուլիսի ընթացքում:

3. Որոշման դեմ Ռուբեն Վարդազարյանի Ներկայացուցչի Բողոքը ստացվել է 01.07.2022 թվականին:

4. Բարձրագույն դատական խորհուրդը 07.07.2022 թվականին որոշել է Բողոքի քննության համար զեկուցող նշանակել խորհրդի անդամ Վիգեն Քոչարյանին (այսուհետ՝ Զեկուցող):

5. 13.07.2022 թվականին Զեկուցողը Բարձրագույն դատական խորհրդին է ներկայացրել Բողոքի վերաբերյալ իր եզրակացությունը:

6. 14.07.2022 թվականին Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացրել Բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:

7. Բարձրագույն դատական խորհրդի 04.07.2022 թվականի թիվ ԲԴԽ-66-Ո-173 որոշմամբ Գագիկ Վրեժի Ջհանգիրյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները 04.07.2022 թվականից համարվել են դադարած, ուստի Գագիկ Ջհանգիրյանին բացարկ հայտնելու մասին միջնորդությունը չի քննարկվել առարկայազուրկ լինելու հիմքով: Բարձրագույն դատական խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանին բացարկ հայտնելու մասին և Բարձրագույն դատական խորհրդի անդամ Դավիթ Խաչատուրյանին բացարկ հայտնելու մասին միջնորդությունները մերժվել են անհիմն լինելու հիմքով:

<u>4. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.</u>

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը» վերտառությամբ 156.1 հոդվածի համաձայն՝

«1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

2. Բարձրագույն դատական խորհուրդը բողոքն ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու

որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ կայացվում է որոշում:

(...)

5. Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

6. Բողոքի քննությունը կատարվում, և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում:

7. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ընդունվում է նիստին մասնակցող Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:»:

Բարձրագույն դատական խորհրդի 22.10.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 98-101-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են.

«98. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը Դեպարտամենտի կենտրոնական մարմինը ստանալուն պես անմիջապես ներկայացնում է Խորհրդի անդամներին և Օրենքով նախատեսված սուբյեկտներին:

99. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ Խորհրդի անդամներից մեկը բողոքը ստանալու պահից 20 օրվա ընթացքում Խորհրդին է ներկայացնում եզրակացություն բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ:

100. Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումը կայացնում է գրավոր ընթացակարգով՝ բողոքը ստանալու պահից երկամսյա ընթացքում:

101. Այն դեպքում, երբ Խորհրդի Նախագահի կամ որևէ անդամի միջնորդությամբ Խորհուրդը գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի

քննությունն իրականացնել նիստում՝ կողմերի մասնակցությամբ, Խորհուրդը ընդունում է համապատասխան որոշում, և նիստը նշանակվում է ոչ ուշ, քան բողոքը ստանալու պահից 30 օրվա ընթացքում:»:

Բարձրագույն դատական խորհուրդը, անդրադառնալով Բողոքի քննությունը Ռուբեն Վարդազարյանի մասնակցությամբ մինչև 27.07.2022 թվականն իրականացնելու մասին Ներկայացուցչի միջնորդությանը, գտել է, որ Բողոքի քննությունը նիստում անկցկացնելու անհրաժեշտություն չկա և 14.07.2022 թվականին կայացած նիստի ընթացքում որոշել է ներկայացված Բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:

Բարձրագույն դատական խորհուրդը, ուսումնասիրելով Բողոքաբերի դիմումը, հաշվի առնելով Զեկուցողի եզրակացությունը, և վերլուծելով գործին առնչվող փաստերը, գտնում է, որ ներկայացված Բողոքը ենթակա է մերժման, իսկ բողոքարկվող Որոշումը՝ անփոփոխ թողնման, հետևյալ պատճառաբանությամբ.

Բարձրագույն դատական խորհուրդը մինչև Բողոքի բովանդակությանն անցնելը հարկ է համարում անդրադառնալ Օրենքի 156.1 հոդվածի իրավակարգավորումներին: Այսպես, ըստ վկայակոչված հոդվածի 1-ին մասի՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, **եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա**»:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ որպեսզի պարզվի, թե արդյո՞ք Ներկայացուցչի կողմից Բողոքում նշված հանգամանքները կարող են համարվել ի հայտ եկած էական ապացույց կամ հանգամանք, անհրաժեշտ է բացահայտել նշված հասկացությունների բնույթը:

Այսպես, նախ պետք է հասկանալ՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից Որոշման կայացման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել Բողոքաբերին և նա դրանք չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, արդյո՞ք ըստ Օրենքի 156.1 հոդվածի՝ բողոքարկման հիմք կարող են հանդիսանալ, եթե դրանք կարգապահական միջնորդության քննության ժամանակ գոյություն չեն ունեցել օբյեկտիվ իրականությունում:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի հունիսի 22-ի թիվ ՍԴՈ-1222 որոշմամբ ևս, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներին, նշել է. « *(…) այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած* ***օբյեկտիվորեն գոյություն***

են ունեցել *գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր-ի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)՝ նորահայտ են (…)»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներով վերահաստատել է, որ այն հանգամանքները, որոնք **արդեն իսկ առկա են դատաքննության ժամանակ**, սակայն որևէ պատճառով չեն ներկայացվել դատարան և հայտնի են դարձել միայն դատավարությունից հետո, համարվում են «նոր երևան եկած»: Դատարանի ակտն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դիմած անձը պետք է ցույց տա, որ ապացույցն անհնար է եղել ներկայացնել վերջնական նիստի ժամանակ, և այդ ապացույցն ունի որոշիչ նշանակություն (տե՛ս՝ Xheraj v. Albania, application no. 37959/02, §53-54, Nikitin v. Russia, no. 50178/99, § 54-57, Yerogova v. Russia, application no. 77478/01, §33, Maltseva v. Russia, application no. 76676/01, §33, Kumkin and others v. Russia, application no. 73294/01, §31):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն՝ արդյոք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե՝ ոչ (տե՛ս՝ Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԿԴ/2397/02/09 որոշումը, 30.04.2015 թվականի թիվ ԵՄԴ/0563/02/12 որոշումը):

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ ներկայացված իրավական դիրքորոշումների լույսի ներքո ակնհայտ է, որ Օրենքի 156.1 հոդվածով նախատեսված ի հայտ եկած էական ապացույցը կամ հանգամանքը կարող է համարվել բողոքարկման հիմք հետևյալ երկու բաղադրիչների միաժամանակյա առկայության պայմաններում. նախ՝ բողոքարկողն այն նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և, որ ամենակարևորն է, ներկայացնելու դեպքում այն էական ազդեցություն կարող էր ունենալ որոշման վրա: Այսինքն, **հոդվածի նման ձևակերպումը կասկածի տեղիք չի տալիս, որ այդ ապացույցը կամ հանգամանքը պետք է գոյություն ունենա որոշման կայացման պահին և ողջամտորեն կարող է ազդել գործի ելքի և որոշման վրա:**

Վերոգրյալից կարելի է նաև եզրակացնել, որ «ի հայտ եկած էական ապացույց կամ հանգամանք»-ները այնպիսի ապացույցներն և հանգամանքներն են, որոնք գործի քննության ընթացքում գոյություն են ունեցել, կարող էին էական նշանակություն ունենալ գործի ելքի վրա, սակայն տարբեր պատճառներով կողմերին հայտնի չեն եղել, ինչի արդյունքում չեն քննարկվել և ուսումնասիրվել վարույթի ընթացքում:

Անդրադառնալով Ներկայացուցչի կողմից Բողոքում նշված առաջին հիմքին, այն է՝ Որոշումը դատարանի ոչ օրինական կազմով կայացված լինելուն՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ նշված հիմքի շրջանակներում Բողոքաբերի կողմից ներկայացվել են հիմնավորումներ այն մասին, որ որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհուրդը գործը քննել է ոչ օրինական կազմով, մասնավորապես այնպիսի անդամների (Գագիկ Ջհանգիրյան, Գրիգոր Բեքմեզյան և Դավիթ Խաչատուրյան) կողմից, ովքեր, Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էին ինքնաբացարկ հայտնել:

1.1 Այսպես, Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ նախաձեռնած հանձնախմբի անդամ **Գրիգոր Բեքմեզյանի** կողմից ինքնաբացարկ հայտնելու՝ Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությունը Ներկայացուցիչը հիմնավորում է՝ փաստելով, որ Բարձրագույն դատական խորհրդի կազմում ընդգրկված Գրիգոր Բեքմեզյանը կանխակալ վերաբերմունք ունի կարգապահական վարույթի կողմ Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, որպիսի հանգամանքը հաստատվում է կարգապահական վարույթի ընթացքում նրա դրսևորած վարքագծով:

Բացի այդ, 20.06.2022 թվականին Ռուբեն Վարդազարյանն իր ներկայացուցիչ Արամ Օրբելյանի հետ համատեղ հրավիրել է ասուլիս, որի ընթացքում Ռուբեն Վարդազարյանը հրապարակել է իր, Գագիկ Ջհանգիրյանի և Ստեփան Միքայելյանի մասնակցությամբ տեղի ունեցած խոսակցության հատվածների ձայնագրությունը, ինչից հետո Գրիգոր Բեքմեզյանը, արձագանքելով ձայնագրությանը, «news.am» լրատվական կայքին տրված հարցազրույցում, մասնավորապես, նշել է, որ Բարձրագույն դատական խորհրդում տեղի է ունեցել փակ քննարկում, Գագիկ Ջհանգիրյանը տվել է որոշակի պարզաբանումներ, որ արդյունքում վերջինիս մոտ շատ հարցեր փարատվել են:

Բողոքաբերի պնդմամբ՝ Գրիգոր Բեքմեզյանի կողմից դրսևորվել է ակնհայտ տարբերակված մոտեցում Բարձրագույն դատական խորհրդի երկու անդամների նկատմամբ՝ ի վնաս Ռուբեն Վարդազարյանի, քանի որ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ հանդես գալուց առաջ Գրիգոր Բեքմեզյանը հարկ չի համարել որևէ բացատրություն պահանջել Ռուբեն Վարդազարյանից, այնինչ Գագիկ Ջհանգիրյանի դեպքում վերջինիցս պահանջվել է պարզաբանում:

Բողոքաբերը հավելել է նաև, որ Գրիգոր Բեքմեզյանին չի անհանգստացրել այն հանգամանքը, որ 10.05.2022 թվականին «ArmDaily» էլեկտրոնային պարբերականում նշված հոդվածը հնարավոր է, որ ամբողջական չէ կամ խեղաթյուրված կամ կոնտեքստից կտրված է:

Ուսումնասիրելով Ներկայացուցչի Բողոքում ներկայացված հանգամանքները, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Գրիգոր Բեքմեզյանի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու պահանջներն անհիմն են, հետևյալ պատճառաբանմամբ.

Գրիգոր Բեքմեզյանի հարցազրույցը «news.am» լրատվական կայքին տեղի է ունեցել 21.06.2022 թվականին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստից և Որոշման կայացումից (16.06.2022թ.), ինչպես նաև Ռուբեն Վարդազարյանի և նրա ներկայացուցչի կողմից ձայնագրության հրապարակումից (20.06.2022թ.) հետո: Հարցազրույցի ժամանակ, ի թիվս այլնի, Գրիգոր Բեքմեզյանը նշել է նաև. «Երբ լսեցի պարոն Ջհանգիրյանի կողմից արված պարզաբանումները, իմ մոտ շատ հարցեր փարատվեցին, ***բայց նման եզրակացություն հայտնելու համար ես պետք է ամբողջական ձայնագրությունը լսեմ***»: Ավելին, Գրիգոր Բեքմեզյանը ձայնագրության հրապարակումից հետո, 20.06.2022 թվականին գրությամբ դիմել է Ռուբեն Վարդազարյանին՝ խնդրելով հայտնել, թե երբ, որտեղ և ինչ պայմաններում է տեղի ունեցել ձայնագրությունը, ովքեր են ներկա գտնվել հանդիպմանը, ինչպես նաև խնդրել է Բարձրագույն դատական խորհրդին տրամադրել ձայնագրության ամբողջական տարբերակը: Այսինքն, դրսևորելով միևնույն վարքագիծը, Գրիգոր Բեքմեզյանը փորձել է պարզաբանումներ ստանալ ոչ միայն Գագիկ Ջհանգիրյանից, այլ նաև Ռուբեն Վարդազարյանից:

Ակնհայտ է նաև, որ հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարծիք է հայտնել արդեն իսկ գոյություն ունեցող փաստի վերաբերյալ, այն է՝ ձայնագրությունն իրականում մոնտաժված է եղել, ինչի մասին փաստել է նաև Ռուբեն Վարդազարյանը: Բացի այդ, 16.06.2022 թվականի կարգապահական վարույթի շրջանակում ձայնագրությունը որևէ կերպ չի եղել քննության առարկա, դրա գոյության և բովանդակության մասին Բարձրագույն դատական խորհրդի անդամները չէին կարող իմանալ և, առավել ևս, կարծիք հայտնել նիստի ժամանակ: Ռուբեն Վարդազարյանն անձամբ է բացահայտել ձայնագրությունը՝ միաժամանակ նշելով, որ այն ծաղկաքաղ է և/կամ մոնտաժված է մոտ 2 ժամից ավելի տևած հանդիպման ձայնագրությունից:

Ինչ վերաբերում է Ռուբեն Վարդազարյանի՝ «ArmDaily» էլեկտրոնային պարբերականին տրված հարցազրույցին, կարևոր է ընդգծել, որ ինչպես Բարձրագույն դատական խորհուրդը նշել է Որոշման մեջ՝ հարցազրույցի հղումը տեղադրվել է Ռուբեն Վարդազարյանի անձնական Ֆեյսբուքի էջում, և հարցազրույցում առկա արտահայտություններից Ռուբեն Վարդազարյանը երբևէ հրապարակայնորեն չի հրաժարվել, այդ թվում՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված իր և իր փաստաբանի գրություններով: Նշվածից Բարձրագույն դատական խորհրդի անդամն

օբյեկտիվորեն կարող էր եզրակացնել, որ «ArmDaily» էլեկտրոնային պարբերականին տրված հարցազրույցը և դրանում առկա Արտահայտությունները Ռուբեն Վարդազարյանինն են:

Վերոշարադրյալ փաստերի համատեղ վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Բողոքում ներկայացված փաստարկները չեն կարող համարվել Օրենքի 156.1 հոդվածի իմաստով ի հայտ եկած այնպիսի հանգամանքներ, որոնք Բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որոնք ողջամտորեն կարող էին ազդել Որոշման վրա, քանի որ նշված փաստերը գոյություն չեն ունեցել գործի քննության և վերջնական Որոշման կայացման պահին, մասնավորապես նշված բոլոր գործողությունները կատարվել են Որոշումը կայացնելուց հետո, Որոշման կայացումից հետո հրապարակված նյութի հիման վրա, և Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարծիք է հայտնել Որոշման կայացումից հետո Ռուբեն Վարդազարյանի կողմից հրապարակած նյութի վերաբերյալ, ընդ որում՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարծիքը եղել է ոչ թե վերջնական, այլ՝ նախնական, քանի որ հստակ նշվել է, որ անհրաժեշտ է ամբողջական ձայնագրությունը վերջնական կարծիք ձևավերելու համար:

Ըստ Բողոքաբերի փաստարկների՝ Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունի նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամ **Դավիթ Խաչատուրյանը**, ինչն, ըստ Ներկայացուցչի, ակնհայտ է դառնում 27.06.2022 թվականին Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպազրույցում նրա հայտնած տեղեկությունների բովանդակությունից: Մասնավորապես, վերջինս հայտնել է, որ Բարձրագույն դատական խորհրդում Գագիկ Ջհանգիրյանի մասնակցությամբ ձայնագրության հարցով հանձնախումբ է ձևավորվել, ինչի կապակցությամբ խնդրել են ձայնագրության ամբողջական, մոնտաժով չաղավաղված տարբերակը:

Բողոքաբերի պնդմամբ՝ ինչպես Գրիգոր Բեքմեզյանի դեպքում էր, Դավիթ Խաչատուրյանի դեպքում ևս ակնհայտ է Բարձրագույն դատական խորհրդի երկու անդամների նկատմամբ տարբերակված մոտեցում դրսևորելու հանգամանքը՝ ի վնաս Ռուբեն Վարդազարյանի, քանի որ թե՛ Ռուբեն Վարդազարյանի, թե՛ Գագիկ Ջհանգիրյանի դեմ կարգապահական վարույթ հարուցելու հանձնախմբի կազմում ընդգրկված լինելով՝ Դավիթ Խաչատուրյանը Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ հանդես գալուց առաջ հարկ չի համարել դիմել «ArmDaily» պարբերականին՝ պարզելու համար, թե արդյոք նշված հոդվածն ամբողջական է, թե՝ ոչ, կամ արդյո՞ք խեղաթյուրված կամ կոնտեքստից կտրված չէ, այնինչ Գագիկ Ջհանգիրյանի դեպքում պահանջել է «ձայնագրության ամբողջական, մոնտաժով չաղավաղված տարբերակը»:

Ուսումնասիրելով Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի Բողոքում ներկայացված հանգամանքները, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ

Դավիթ Խաչատուրյանի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու պահանջները հիմնավորված չեն, հետևյալ պատճառաբանմամբ.

Ազգային ժողովում Դավիթ Խաչատուրյանի՝ լրագրողների հետ ունեցած ճեպազրույցը տեղի է ունեցել 27.06.2022 թվականին:

Բողոքաբերի կողմից մեջբերվում է ճեպազրույցի ընթացքում արված Դավիթ Խաչատուրյանի հետևյալ արտահայտությունը՝ «ձայնագրության ամբողջական, **մոնտաժով չաղավաղված տարբերակը»:** Անդրադառնալով **«աղավաղել»** բառին, հարկ ենք համարում նշել, որ այն նշանակում է նաև բնագիրը սխալներով վերարտադրել[9], քանի որ յուրաքանչյուր դեպքում մոնտաժի միջոցով խախտվում է ձայնագրության ամբողջականությունը, այն շեղվում է բնագրից:

Ակնհայտ է, որ ճեպազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարծիք է հայտնել արդեն իսկ գոյություն ունեցող փաստի վերաբերյալ, այն է՝ ձայնագրությունն իրականում մոնտաժված է եղել, ինչի մասին փաստել է նաև Ռուբեն Վարդազարյանը: Բացի այդ, 16.06.2022 թվականի կարգապահական վարույթի շրջանակում ձայնագրությունը որևէ կերպ չի եղել քննության առարկա, դրա գոյության և բովանդակության մասին Բարձրագույն դատական խորհրդի անդամները չէին կարող իմանալ և, առավել ևս, կարծիք հայտնել նիստի ժամանակ: Ռուբեն Վարդազարյանն անձամբ է բացահայտել ձայնագրությունը՝ միաժամանակ նշելով, որ այն ծաղկաքաղ է և/կամ մոնտաժված է մոտ 2 ժամից ավելի տևած հանդիպման ձայնագրությունից:

Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ձայնագրության մոնտաժված լինելու մասին բացի **Գրիգոր Բեքմեզյանից** և **Դավիթ Խաչատուրյանից** արձանագրել են նաև Բարձրագույն դատական խորհրդի երեք այլ անդամներ, ովքեր ներառված են եղել Գագիկ Ջհանգիրյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն կազմող Հանձնախմբում: Մասնավորապես Հանձնախումբը նշել է. «Հրապարակված ձայնագրությունն ամենայն հավանականությամբ **մոնտաժված է**, դրանում հատվածական մտքեր են շուրջ երկու ժամ տևած հանդիպումից, ինչը հաստատվել է նաև Ռ.Վարդազարյանի կողմից ասուլիսի ժամանակ: (…) Հանձնաժողովը գտնում է, որ **մոնտաժված ձայնագրության** հիման վրա անհնար է սկսել դատավորի կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում»[10]:

---

[9]Տե՛ս՝ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,** Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան, 1969: **Արդի հայերենի բացատրական բառարան,** Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976:

[10] Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Հանձնախմբի՝ 30 հունիսի 2022թ. դիրքորոշում:

Ինչ վերաբերում է Ռուբեն Վարդազարյանի՝ «ArmDaily» էլեկտրոնային պարբերականին տրված հարցազրույցին, ինչպես նշեցինք Գրիգոր Բեքմեզյանի դեպքում, այս պարագայում ևս կարևոր է ընդգծել, որ հարցազրույցի հղումը տեղադրվել է Ռուբեն Վարդազարյանի անձնական Ֆեյսբուքի էջում, և հարցազրույցում առկա արտահայտություններից Ռուբեն Վարդազարյանը երբևէ հրապարակայնորեն չի հրաժարվել, այդ թվում՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված իր և իր փաստաբանի գրություններով: Նշվածից Բարձրագույն դատական խորհրդի անդամն օբյեկտիվորեն կարող էր եզրակացնել, որ «ArmDaily» էլեկտրոնային պարբերականին տրված հարցազրույցը և դրանում առկա Արտահայտությունները Ռուբեն Վարդազարյանինն են:

Վերոշարադրյալ հանգամանքների վերլուծությունը թույլ է տալիս Բարձրագույն դատական խորհրդին պնդել, որ Բողոքում ներկայացված փաստարկները չեն կարող համարվել Օրենքի 156.1 հոդվածի իմաստով ի հայտ եկած այնպիսի հանգամանք, որը Բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել Որոշման վրա, քանի որ նշված փաստը գոյություն չի ունեցել գործի քննության և վերջնական Որոշման կայացման պահին, մասնավորապես ճեպազրույցը տեղի է ունեցել 27.06.2022 թվականին, Որոշումը կայացնելուց հետո, իսկ Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարծիք է հայտնել Որոշման կայացումից հետո Ռուբեն Վարդազարյանի կողմից հրապարակած նյութի վերաբերյալ:

Բացի այդ, նույնիսկ եթե ժամանակային առումով որևէ խնդիր չլիներ, և՛ Գրիգոր Բեքմեզյանի, և՛ Դավիթ Խաչատուրյանի կանխակալության վերաբերյալ Բողոքաբերի կողմից ներկայացված կասկածները չեն հաստատվում, քանի որ կողմին չի հաջողվել ապացուցել Բարձրագույն դատական խորհրդի անդամների՝ գործի ելքով շահագրգիռ/կանխակալ լինելու հանգամանքը:

1.2. Բողոքաբերի պնդմամբ՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում նշանակված նիստերը նախագահել է **Գագիկ Ջհանգիրյանը**, ով ակնհայտորեն կանխակալ վերաբերմունք ունի կարգապահական վարույթում որպես կողմ հանդես եկող Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ, ինչը երևում է 20.06.2022 թվականին հրապարակված ձայնագրության բովանդակությունից:

Բացի այդ, ըստ Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի, Գագիկ Ջհանգիրյանի կողմից Պետրոս Ղազարյանին տրված հարցազրույցի բովանդակությունից ակնհայտ է, որ վերջինս անաչառ և անկողմնակալ չէ սույն գործով. նրա միակ նպատակը Ռուբեն Վարդազարյանին Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնից ամեն գնով հեռացնելն է: Բողոքաբերը պնդել է, որ Գագիկ Ջհանգիրյանի հարցազրույցի

ուսումնասիրությունը և կարգապահական վարույթի ընթացքում Ռուբեն Վարդազարյանի արդար դատաքննության իրավունքի բազմակի և կոպիտ խախտումները վկայում են այն մասին, որ տվյալ դեպքում ոչ թե իրականացվել է Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի ըստ էության քննություն, այլ Բարձրագույն դատական խորհուրդը (առնվազն՝ բավարար թվով անդամները) կամ առնվազն Գագիկ Ջհանգիրյանն արդեն ունեցել են հստակ դիրքորոշում, որը հանգել է Ռուբեն Վարդազարյանի՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի նախագահի լիազորությունների դադարեցման:

Ուսումնասիրելով Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի Բողոքում ներկայացված հանգամանքները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Գագիկ Ջհանգիրյանի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու պահանջը հիմնավորված չէ, հետևյալ պատճառաբանմամբ.

Նախ՝ Գագիկ Ջհանգիրյանի կողմից Պետրոս Ղազարյանին տրված հարցազրույցը տեղի է ունեցել Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստից և Որոշման կայացումից (16.06.2022թ.), ինչպես նաև Ռուբեն Վարդազարյանի և նրա ներկայացուցչի կողմից ձայնագրության հրապարակումից (20.06.2022թ.) հետո, ինչից կարելի է հանգել այն եզրակացության, որ այն ևս չի համարվում Օրենքի 156.1 հոդվածի իմաստով ի հայտ եկած այնպիսի հանգամանք, որը Բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել Որոշման վրա, քանի որ գործով վերջնական դատական ակտի կայացման պահին այն գոյություն չի ունեցել օբյեկտիվ իրականությունում:

Այնուամենայինիվ, դիտարկելով մատնանշված հանգամանքները՝ Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում նշել, որ ձայնագրության իրականացման պահին Գագիկ Ջհանգիրյանի կարծիքը Ռուբեն Վարդազարյանի՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնավարման շարունակության նպատակահարմարության վերաբերյալ մեխանիկորեն կամ ինքնին չի ենթադրում նրա կողմնակալությունը Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության հարցը լուծելիս կամ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ և դատավոր պաշտոնավարելու վերաբերյալ:

Կարևոր է հաշվի առնել նաև, որ Ռուբեն Վարդազարյանը, իմանալով 20.06.2022 թվականին հրապարակված ձայնագրության գոյության մասին, մինչև սույն թվականի հունիս 16-ը (մինչև կայանալիք նիստը) չի բացահայտել դրա մասին Բարձրագույն դատական խորհրդին, իսկ **Ռուբեն Վարդազարյանի փաստաբան Արամ Օրբելյանի կողմից ներկայացվել են թվով երկու միջնորդություններ**՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարճելու մասին և կարգապահական

վարույթի քննությունը հետաձգելու մասին, **որոնց կից չի միջնորդվել բացարկ հայտնել Գագիկ Ջհանգիրյանին:** Կարևոր է ընդգծել, որ միջնորդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կողմն ակնկալում էր դրանց վերաբերյալ որոշման կայացումը մինչև Բարձրագույն դատական խորհրդի նիստում քննության սկիզբը, Բարձրագույն դատական խորհրդի ամբողջական կազմով, ներառյալ՝ Գագիկ Ջհանգիրյանի մասնակցությունը: Այսինքն, եթե Ռուբեն Վարդազարյանը կամ նրա ներկայացուցիչն ունեին նախապես ձևավորված կասկածներ Գագիկ Ջհանգիրյանի կողմնակալության մասին՝ հիմնվելով ձայնագրության վրա, ապա դրանք պարտավոր էին ներկայացնել հիշատակված երկու միջնորդությունների հետ, ինչը չի արվել ո՛չ Ռուբեն Վարդազարյանի, ո՛չ նրա ներկայացուցչի կողմից: Ուստի կարող ենք եզրակացնել, որ կողմը, տեղյակ լինելով ձայնագրության մասին և մինչև նիստը ներկայացրած իր միջնորդությունների, այդ թվում՝ գործի կարճման, քննության համար Գագիկ Ջհանգիրյանին չհայտնելով բացարկ, կասկածի տակ չի դրել վերջինիս անկողմնակալությունը:

Այսպիսով, Գագիկ Ջհանգիրյանի կողմնակալության մասին Բողոքաբերի փաստարկները չունեն օբյեկտիվ հիմքեր:

Անդրադառնալով Բողոքում նշված երկրորդ հիմքին, այն է՝ թույլ են տրվել Ռուբեն Վարդազարյանի արդար դատաքննության իրավունքի խախտումներ, մասնավորապես խախտվել է Ռուբեն Վարդազարյանի լսված լինելու իրավունքը, Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում նշել, որ Բարձրագույն դատական խորհուրդի կողմից Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 16.06.2022 թվականին կայացված և 23.06.2022 թվականին հրապարակված թիվ ԲԴԽ-58-Ռ-Կ-11 որոշմամբ մանրամասն անդրադաձել է այս խնդրին, սակայն, ամեն դեպքում, տվյալ հարցը չի կարող ևս մեկ անգամ քննարկման առարկա դառնալ, քանի որ Օրենքի 156.1 հոդվածը չի նախատեսում բողոքարկում նյութական կամ դատավարական օրենքի խախտման հիմքով, այլ որպես բողոքարկման հիմք է դիտարկում ի հայտ եկած այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

Ելնելով վերոգրյալներից, վերլուծելով գործին առնչվող փաստերը և իրավակարգավորումները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156.1 հոդվածով, Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչ Արամ Օրբելյանի բողոքը՝ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 16.06.2022 թվականին կայացված և 23.06.2022 թվականին հրապարակված (թիվ ԲԴԽ-58-Ո-Կ-11) որոշումը վերացնելու մասին, մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ ***Ս. ՉԻՉՈՅԱՆ***

ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ ***Գ. ԲԵՔՄԵՋՅԱՆ***

_____ ***Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ***

_____ ***Մ. ՄԱԿՅԱՆ***

_____ ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

_____ ***Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ***

_____ ***Վ. ՔՈՉԱՐՅԱՆ***